ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2012թ. սեպտեմբերի 17 թիվ 4 նիստում

ԳԽ. ՆԱԽԱԳԱՀ, ԲՄ ՏՆՕՐԵՆ
Ս.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետև Ընկերություն) ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական մարմին է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2 Ընկերությունը գործում է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության, ԵՊՀ ԻՄ օրենսդրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է՝ ելնելով օրինականության և ժողովրդավարության սկզբունքներից:

1.4 Ընկերության կողմից իրականացվող աշխատանքներին և ծրագրերին կարող են մասնակցել ինչպես ԵՊՀ ԻՄ, այնպես էլ այլ գիտակրթական հաստատությունների ուսանողները, ասպիրանտները և դասախոսները:

1.5 Ընկերության կանոնադրությունը և նրա մեջ կատարվող փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից:

1.6 Ընկերությունը, ելնելով իր շահերից, նպատակներից և խնդիրներից, կարող է կապեր հաստատել ՀՀ և արտերկրի հասարակական, պետական և այլ կազմակերպությունների հետ:

1.7 Ընկերության հարաբերությունները ԵՊՀ ԻՄ ղեկավար մարմինների հետ կարգավորվում են ԵՊՀ ԻՄ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի համապատասխան որոշումներով:

1.8 Ընկերությունն իր նպատակների և խնդիրների լուծման, երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար և այլ դեպքերում համագործակցում է ԵՊՀ ԻՄ ուս. խորհրդի և այլ կազմակերպությունների հետ՝ ելնելով փոխօգնության, փոխշահավետության և հավասարության սկզբունքներից և համապատասխան պայմանագրերից ու համաձայնագրերից:

1.9 Ընկերության անվանումը ռուսերեն՝ Студенческое научное общество Иджеванского филиала Ереванского государственного университета, անգլերեն՝ Student scientific society of Ijevan branch of Yerevan state university, իսկ կրճատ անվանումը հայերեն՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ, Ռուսերեն՝ СНО ИФ ЕГУ, անգլերեն՝ SSS YSUIB:

1.10 Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 4001, ք. Իջևան, Ուսանողական 3, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ:

2. Ընկերության նպատակը և խնդիրները

2.1 Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

ա) գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,

բ) ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների, ինտելեկտուալ խաղերի և այլ գիտական և կրթական ուղղվածություններ ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,

գ) համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և առկա բազայի մասին տեղեկատվության համակարգում,

դ) աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին,

ե) գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,

զ) ուսանողների գիտական աշխատանքների և նյութերի հրատարակում,

է) այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

3. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

Ա. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններ

3.1 Ընկերության կառուցվածքային սկզբնական օղակները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր ամբիոնի երաշխավորությամբ ներկայացված առնվազն երկու ուսանողներից: Ֆակուլտետի ՈւԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են Ընկերության ծրագրերի և նպատակների իրականացմանը:

3.2 Ֆակուլտետի ՈւԳԸ-ն ընտրում է ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ, ով նշանակում է ֆակուլտետի ՈւԳԸ քարտուղար: Նրանք կազմակերպում են ֆակուլտետի ՈւԳԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա հանձնախմբերի աշխատանքները, ներկայացնում են ֆակուլտետի ՈւԳԸ-ն և նրա ծրագրերը Ընկերության գիտական խորհրդում:

3.3 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից, կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են 1/2, իսկ որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և սահմանել սույն կանոնադրությանը չհակասող այլ կառուցվածքային միավորներ:

3.4 Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի և Ընկերության գիտական խորհրդի անդամ:

3.5 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն ֆակուլտետի յուրաքանչյուր մասնագիտության համար ստեղծում է ակումբ, որի կազմում կարող են ընդգրկվել տվյալ մասնագիտության ուսանողները: Յուրաքանչյուր ակումբ ունի իր նախագահը, ով համակարգում է ակումբի գործունեությունը:
Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է կյանքի կոչել նաև այլ ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողներ:

Բ. ԵՊՀ ԻՄ Ուսանողական Գիտական Ընկերություն

3.6 Ընկերության բարձրագույն ղեկավար մարմինը Ընկերության գիտական խորհուրդն է:

3.7 Ընկերության գիտական խորհուրդը՝

ա)քննում և որոշում է Ընկերության կառուցվածքը և գործունեության կարևորագույն ուղղությունները,
բ)փոփոխություններ և լրացումներ է կատարում Ընկերության կանոնադրության մեջ,
գ)միջոցներ է ձեռնարկում իր ընդունած որոշումների իրականացման համար,
դ)մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում է և կոորդինացնում ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
ե)հաստատում է աշխատակարգը,
զ)ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված Ընկերության աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերող որոշ հարցերի լուծման իրավունք,
է)հաստատում է Ընկերության այն անդամների կազմը, ովքեր Ընկերության կողմից ներկայացվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում,
ը)իրավունք ունի քննել և լուծարել Ընկերությանը վերաբերող ցանկացած հարց:

3.8 Ընկերության գիտական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով. գիտական խորհրդի նիստը հրավիրվում է նախագահի կողմից

առնվազն ամիսը մեկ անգամ: Գիտական խորհրդի նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են Գիտական խորհրդի անդամների ավելի քան 1/2–ը, իսկ որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

3.9 Ընկերության Գիտական խորհրդի անդամ են հանդիսանում ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈՒԳԸ նախագահները և Ընկերության գիտական խորդհրդի կողմից ընտրված այլ անդամներ, ընդ որում, գիտական խորհուրդը չի կարող ունենալ 10-ից ավելի անդամ: Ընկերության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Ընկերության գիտական խորհրդի նախագահ:

3.10 Սույն կանոնադրությամբ չնախատեսված և չկարգավորվող հարցերը կարգավորում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի և Ընկերության գիտական խորհրդի որոշումներով:

Գ. Գիտական խորհրդի անդամները

3.11 Ընկերության նախագահը ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր: Ամիսը մեկ անգամ ընկերության նախագահը Ընկերության գիտական խորհրդի առջև հանդես է գալիս Ընկերության ծրագրերի կատարման ընթացքի մասին հաղորդմամբ, տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին:

3.12 Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է Ընկերության գիտական խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային օղակների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

3.13 Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով Ընկերության գիտական խորհրդի աշխատակարգով:

3.14 Ընկերության նախագահին հաստատում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը: Ընկերության նախագահի տեղակալին և քարտուղարին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության նախագահը:

3.15 Ընկերության գիտական խորհրդի անդամները պարտավոր են կատարել գիտական խորհրդի բոլոր որոշումները:

3.16 Ընկերության բոլոր ղեկավար մարմինները իրավունք չունեն իրականացնել ընկերության հետ առնչվող այնպիսի գործունեություն, որի համար չունեն սույն կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

4. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

4.1 Ընկերության միջոցները գոյանում են ԵՊՀ ԻՄ բյուջեից կատարվող մասհանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից:

4.2 Ընկերությունը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԵՊՀ ԻՄ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

4.3 Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. Հանձնաժողովներ

5.1 Ընկերության աշխատանքները համակարգելու, լուսաբանելու և այլ հաստատությունների հետ համագործակցությունը իրականացնելու համար գործում են հետևյալ հանձնաժողովները՝

- Աշխատակազմ,
- Տեղեկատվական հանձնաժողով,
- Արտաքին կապերի հանձնաժողով:

5.2 Ընկերության աշխատանքները պատշաճ կազմակերպելու և միջոցառումները համակարգելու համար ձևավորվում են աշխատանքային ժամանակավոր խմբեր, որոնց լիազորությունները դադարում են իրենց կոորդինացրած աշխատանքները ավարտվելուց հետո: Ընկերության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և մասշտաբները ընդլայնելու նպատակով Ընկերության նախագահը կողմից կարող են նշանակվել պատասխանատուներ:

6. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

6.1 Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է գիտական խորհրդի որոշմամբ, ձայների ընդհանուր թվի 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2 Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը պատկանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին: